

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ≡  
≡ ≡ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ

---

ՈՒՂԵՑՈՅՑ

ԲՐՈՒԲԱԿԱՆՏԻ

1928

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ  
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՆՕՐԷՆՈՒԹԵԱՆ  
ԲԱՐԻՁ

361

ՈԼ-43

« Պէտք չունիմ Հայութեան վրայ ծանրացող պարտականութիւնը յիշեցնելու, գիտեմ որ կը բաւէ ամէն Հայու ազգասիրութեան կոչում ընել, որպէս զի իւրաքանչիւրը տայ ինչ որ կրնայ, եւ, կը սիրեմ յուսալ, աւելի քան ինչ որ կրնայ, այն վեհ մտածումով որ Թերեւս ասիկա պիտի ըլլայ վերջին ու փրկահատ զոհողութիւնը: »

ՊՕՂՈՍ ՆՈՒՊԱՐ

« Բարեգործականը ոչ միայն Ազգին անսահման վստահութեան արժանացած է, այլ նաեւ օտարներու հիացման առարկայ եղած է: »

ՍԱՀԱԿ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԿԻԼԻԿԻՈՅ

« Իբրեւ Ամերիկացի կամ Գանատացի, չեմ կրնար հաւատալ, որ ո եւ է ազգասէր հայ Հ. Բ. Ը. Միութեան անդամ եղած չըլլայ. եւ եթէ ես եպիսկոպոս մը ըլլայի, այս բեմէն կոչ պիտի ընէի ձեզ, որ եթէ ձեր մէջ կան անդամ չեղողներ, անդամ գրուին անմիջապէս, վասն զի Բարեգործականին տեղը շատ մեծ է որբայինամ գործին մէջ »

ՏՕԲԹ. ՄԷՔԱԼԼԸՍ

« Ուր որ Հ. Բ. Ը. Միութիւնը հաստատուած էր, մեզի գործ չէր մնացած կատարելու: »

ՏՕԲԹ. ՈՒԸՐԹ

« Հայոց Բարեգործական Ընդհանուր Միութիւնը եզական է իր տեսակին մէջ: Անոր ոյժ տալու ամէնքս ալ պարտաւոր ենք: Ազգին համար բարոյական, մտաւոր եւ տնտեսական յենարան մը գոյացնելու հեռատես խորհրդովն յղացուած է անիկա. իր աշխարհագրական դիրքն ալ իրեն համար անկախութիւն կ'ապահովէ նիւթապէս: »

ԲԻԻԶԱՆԴ ԲԷԶԵԱՆ

361  
Ու-43

ՈՒՂԵՅՈՅՑ

ԲՐՈԲԱԿԱՆՏԻ

1928

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՆՕՐԷՆՈՒԹԵԱՆ  
Բ Ա Ր Զ



27 AUG 2013

43.170

ՈՒՂԵՑՈՅՑ

Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ

ԲՐՈՒԿԱԿԱՆՏԻՆ

Ընդհ. Տնօրէնութիւնը ի պէտս Միութեան շրջուն գործիչներուն պատրաստած է սոյն հրահանգը, որ կրնայ իբրև ուղեցոյց ծառայել նաև առհասարակ ամէն անոնց որ կը նուիրուին Միութեան բրոքականտին:

1. — Հ. Բ. Ը. Միութեան բրոքականտին նուիրուած ս կ է անձի և գլխավորապէս՝ շրջուն գործիչին առաջին պարտականութիւնը պէտք է ըլլայ ուշի ուշով ուսումնասիրել Միութեան Հիմնական Կանոնագիրը և անոր անցեալ և ներկայ գործունէութիւնը: Ի միջի այլոց, պէտք է, ըստ կարելոյն, աչքէ անցընէ ՄԻՈՒԹԻՒՆ և ՅՈՒՇԱՐԱՐ պնդած անթերթներուն հաւաքածոն, տարեկան համարատուութեան տեղեկագիրները, զանազան շրջաբերականները և կոչերը, գլխաւորութիւնները և այլ հրատարակութիւնները, ճասնաւորաբար ՈՍԿԵՄԱՏԵԱՆը և ԳՈՐԾԱՊԱՏՈՒՄը, ինչպէս



63264-67



նաեւ մինչեւ ընդհ. պատերազմը, պատերազմի միջոցին և զինադադարէն ապին Միութեան գործունէութիւնը պատկերացնող հայերէն կամ թարգմանածոյ զանազան ամփոփոյթները, որ Ընդհ. Տնօրէնութեան կամ Շրջանակային Յանձնաժողովներու կողմէ իր սրամարտութեան ներքեւ կը դրուին:

Միութեան որդեգրած նպատակին և կատարած դերին ծանօթացուցած անհրաժեշտ է բրոքականտիպին, խնամով պատրաստելու համար իր ընելիք զեկուցումները և բանախօսութիւնները, որ զլիսաւոր գործօնը պիտի ըլլան իր առաքելութեան, և կարենալ պատասխանելու համար իրեն ուղղուելիք հարցումներուն, ինչպէս և ճամուլի միջոցաւ ներկայացուած անկեղծ զիտորութեանց կամ անբարեացակամ քննադատութեանց ճասին:

2. — Ընդհ. Տնօրէնութիւնը, Շրջանակային Յանձնաժողովները կամ տեղական Մասնաժողովները շրջուն գործիչին, և ի հարկին կամաւոր բրոքականտիպին կու տան յանձնարարական մը ուր կը ճշդուի իր պաշտօնը, ծանուցանելով անոր ժամանուածը նաճակներով կամ Միութեան պաշտօնաթերթներուն միջոցաւ (\*):

(\*) Շրջուն գործիչը պէտք է նախ եւ առաջ հոգ տանի ձեռք բերելու անցագիր եւ վեղա բոլոր այն երկիրներուն համար՝ ուրիկէ պիտի անցնի եւ կամ ուր պիտի մնայ ատեն մը: Պէտք է նաեւ ուսումնասիրէ երկաթուղիի կամ շոգեհասի ժամանակացոյցները, ճամբորդութեանց գործակալի մը գիտեցնել, եւ տեղեկանայ իր այ-

Այլ շրջանին մէջ գտնուող Մասնաժողովները ևս, որ կարելի ամէն օժանդակութիւն կ'ընծայեն այցելուին, որ առաջ կ'ազդարարեն թուօյրիով, եկեղեցւոյ բեճէն և այլ միջոցներով, ու միեւնոյն ատեն, ըստ նախօրոք համաձայնութեան, կը հրաւիրեն Միութեան անդամները և համակիրները, իրենց ընտանիքով, նախապէս կարգադրուած հաւաքոյթի մը որուն մէջ կը խօսի գործիչը կամ բրոքականտիպը Միութեան ճասին, ժողովուրդին բացատրելու համար անոր նպատակը և գործը, և ընդլայնելու համար համակրանքի հոսանքը դէպի սոյն համազգային ընկերութիւնը:

3. — Բրոքականտիպը, գործիչ թէ կամաւոր, իր գալուստը որ առաջ պէտք է ծանուցանէ Տեղական Մասնաժողովներուն, համաձայն իր առաքելութեան ուղեգիծին զոր նախապէս պատրաստելու է:

Այն տեղերը ուր Միութիւնը Մասնաժողով չունի՝ բրոքականտիպը պէտք է կանխաւ դիմէ զիրք և հեղինակութիւն ունեցող ծանօթ ազգայիններու, իմացնելով իր այցելութիւնը և անոնցմէ խնդրելով ընձեռել իրենց աջակցութիւնը, որպէս զի կարելի ըլլայ ամբապնդել կապերը կամ նոր համակրանքներ ստեղծել Միութեան շուրջ:

4. — Որոշեալ քաղաքը հասնելուն պէս, բրոքականտիպը անմիջապէս յարաբերութեան կը ձանկէտ:

ցեւեւիք քաղաքներուն դրամին, պանդոկներուն եւ օտարականներու յատուկ այլ ձեւակերպութեանց:



Տեղ. Մասնաժողովին, կամ, եթէ Մասնաճիւղ գոյութիւն չունի, տեղական ազգային ճարձիներուն և յայտնի անձնաւորութեանց հետ, այցելութիւն տարով անոնց, սկսելով երեսկ դաւանանքի եկեղեցական պետերէն: Պէտք է աշխատի որ եկեղեցիին բեճէն, լրագրի ծիջոցաւ, հրաւիրաբարով կամ անձնական գիժուճներով տեղուցն ազգայինները ընտանիքներով ներկայ գտնուին իր այցելութեան առթիւ կազմակերպուելիք հաւաքոյթին, որուն նախադասութեան կոչուելու է ամէնէն աչքի զարնող անձնաւորութիւնը, և ի հարկին Մասնաժողովի ատենապետը կամ հոգեւոր պետ ծը:

5. — Հաւաքոյթին ձեջ, բրբականախողը պէտք է խօսի Միութեան կատարած դերին վրայ, փաստերով և թուանշաններով, ո՛չ ծիայն թուելով անոր կատարած գլխաւոր գործերը, բացատրելով նախկին և ներկայ բազմատեսակ ձեռնարկներուն արժէքն ու նշանակութիւնը, այլ և ճատնանիշ ընելով գաղութահայութեան ձշակութային և Հայաստանի վերաշինական այլազան կարիքները, որոնց Միութիւնը եթէ աւելի լայն չափով դեռ չի կրնար նպատուել, պատճառը իր ծիջոցներուն անբաւականութիւնն է ծիայն: Յետոյ, անիկա կրչուճ կ'ընէ որպէս զի գոյութիւն ունեցող Մասնաճիւղը նոր անդամներով և նուիրատուներով ուժեղանայ, կամ նոր Մասնաճիւղ ծը կաղծուի, և անոր շուրջ բոլորուին գիտակից և պարտաճանաչ Հայեր, որ իրենց ազգասիրութեան յազուրդ տան Միութեան անդամագրուելով և նուիրատուութիւններ կամ կտակներ ընելով:

Այդպիսի հաւաքոյթները սահճանափակ ըլլալով, քանի որ ատոնց կը հրաւուրուին ծիայն Միութեան անդամները, եւ անոր նպատակին ու ուղղութեան հաճակիր ազգայինները, բրբականախողը եւ օրուան նախագահը թոյլ տալու չեն որ հրապարակային վիճաբանութեան փորճեր ըլլան, որ ընդհանրապէս կը խանգարեն հաւաքոյթին կարգն ու կանոնը: Բրբականախողը աւանձնակի ժամաղիր կ'ըլլայ ի հարկին ընդդիմաբանին հետ, անոր հարցապարնուճին պատասխանելու հաճար, եթէ անկեղծ եւ բարեացակամ սղիով կը կատարուի ան:

6. — Անժխտելի է որ լաւագոյն արդիւնքները ձեռք կը բերուին անձնական(\*) գիժուճներով եւ յանձնարարութիւններով, բայց հաւաքոյթները եւս կ'ընճայն յարճար պատեհութիւն ծը ուրկէ կարելի է լայնօրէն օգտուել: Ըստ այնճ, ձէն ծի հաւաքոյթի առթիւ պէտք է գտնուին երկու երեք ազդեցիկ եւ բարեյօճար անձեր, նախընտրաբար տիկիներ, Միութեան անդամներէն կամ գաղութին ազգայիններէն, որ, օգտուելով ստեղծուած նպաստաւոր արաճաղրութիւններէն, փու-

(\*) Անճամբ անձին կատարուած դիւճմները միայն տուած են ցարդ դրական արդիւնքներ: Եթէ Միութեան մէն մի անդամը, տարուան մը ընթացքին, համուէ եւ արճանագրէ իր մէկ ազգականը կամ իր մէկ բարեկամը, տարի մը վերջ Միութեան անդամներուն թիւը եւ անդամաւիճարներուն դուճարը ինքնին կրկնապատուած կ'ըլլայ: Աճա՛ աներկբայօրէն յաջողութեան ամէնէն դիւրին եւ ամէնէն արագ միջոցը:



Թան Միութեան նոր անդամներ արձանագրել, տպեալ յատուկ յանձնառագիրներուն վրայ նշանակելով՝ իւրաքանչիւրին ծուռքի տուրքը և ամսալճարը, և ծիւս կողմէ հին անդամներուն անդամաբաժինները աւելցնելու հետամտին և նուիրատուութիւններ ձեռք բերեն՝ Միութեան այս կամ այն ազգօգուտ նպատակին համար:

7. — Բրոքականտիսդը առհասարակ կուսակցական և այլ ամէն կարգի վիճաբանութիւններէ խոյս տալու է, և Հ. Բ. Ը. Միութեան շուրջ յարուցուած լրագրական բանավէճներուն եւս ո՛չ ճէկ գինով ճանակցելու է: Համոզիչ և փաստացի խօսքերով, թուանշաններով և թուականներով, համբերութեամբ և քաղցրօրէն պատասխանելու է իրեն ուղղուած հարցումներուն: Եթէ չի կարենայ անմիջապէս համոզել իր խօսակիցը, առանց սրտնեղելու, պէտք է ուրիշ պատեհութեամբ ճը անոր ձօտ վերադառնայ, որովհետեւ ծինչեւ նոր հանդիպում ճը թերեւս ընդդիմասուօր անդրադարձած է իր սխալ ըմբռնումներուն և լաւագոյն տրամադրութիւններու ճէջ գտնուի: Անհամբերութիւնը եւ ջղագրգուրութիւնը բրոքականտիսդի ճը յաջողութեան կարեւորագոյն արգելքներն են: Ինքնավստահ, քաղցրալեղու և համբերատար բրոքականտիսդ ճը անպայման կը յաջողի Միութեան վեհ նպատակին և լուրջ ուղղութեան ճասին ամէնէն թերահաւատն անդամ տարհամոզելու:

8. — Բրոքականտիսդը պէտք է աշխատի որ Տեղական Մասնաժողովը իրեն հետ նկատ գումարէ:

Այդ նկատին ճէջ, պէտք է քննուին Մասնաժողովին գործունէութիւնը, անոր հաշիւները, անդամներուն ցանկը, ատոնց թիւը աւելցնելու ճիջոցները, չի վճարող անդամներուն պարագաները, անոնք նորէն անդամագրելու կարելիութիւնները՝ նոր դիմումներով, որոնց լաւ կ'ընէ ճասնակցելով ինք բրոքականտիսդը եւս: Նոյնպէս, բրոքականտիսդը յորդորելու է որ Մասնաժողովը ժամանակին պատկան Կեդրոնը հասցնէ իր գործունէութեան տեղեկագիրը, ինչպէս նաեւ անդամներուն ու նուիրատուներուն ցանկերը և սնտուկին ճէջ պատրաստ գտնուած դրամը:

9. — Նոր Մասնաճիւղ ճը (\*) կազմելու կամ կազմալուծուած Մասնաճիւղ ճը վերակազմելու համար, բրոքականտիսդը պէտք է աշխատի որ, հիմնադրական հաւաքոյթի ճը ճէջ, Մասնաժողովին անդամ ընտրուին տեղւոյն ամէնէն ազբեցիկ և ազգասէր հայերը: Լաւագոյն է որ երբեմն այդ կազմութեան նախաձեռնութիւնը ստանձնէ ճանօթ անձնաւորութիւն ճը և ինք որոշէ իր գործակիցները, այդ կերպով ապահովելու համար համերաշխ գործունէութեան ճը անհրաժեշտ պայմանը, որ ճիշտ յասկանիշը եղած է Միութեան կարգապահու-

(\*) Ըստ Կանոնագրի, Մասնաճիւղներ կընան կազմակերպուել և այն ամէն տեղեր ուր Միութիւնը ունի գէթ տասը անդամ: Հակառակ պարագային, Օժանդակ Մասնաժողովներ կը կազմուին: Մասնաժողովի անդամները (3-7) պէտք է ընտրուին անխտիր ամէն գաւառնաքի ազգայիններուն մէջէն եւ կընան երկուսու ըլլալ:



թեան և ներդաշնակութեան: Ատենապետը պէտք է ա-  
ձէնքէն սիրուած և յարգուած անձնաւորութիւն ծը ըլ-  
լայ, գանձապետը իր պատուաւորութեամբ ծանօթ ձէկը  
և ատենադպիրը ժիր և զարգացած երիտասարդ ծը:

10. — Բրոքականտիսդը պէտք է խորհուրդ  
տայ որ կարելոր գրասենեակներու և վաճառատուննե-  
րու ձէջ, ինչպէս հանդէսներու և հարմիրքներու առ-  
թիւ գանձանակներ հաստատուին յօգուտ Միութեան:  
Բաց աստի, ծննդեան, ամուսնութեան և մահուան առ-  
թիւ փոխան այցի, ծաղկի կամ հեռագրի նուիրատու-  
ութեանց դրութիւնը գործադրուի, յատուկ նուիրատու-  
սերու աւաքումով: Նոյնպէս, պէտք է թելադրէ որ  
Մասնաժողովը իր ձէջէն կամ դրէն երբեմն պատուի-  
րակ ծը զրկէ կամ ուղղակի դիմումներ կատարէ այն  
ձերձակայ վայրերը ուր գտնուած ցանուցիր Հայերը  
Մասնաձիւղ ծը կազմելու չափ բազմաթիւ չեն, սակայն  
կրնան հեռուէն անդամակցիլ կամ միանուազ նուէրներ  
տալ:

11. — Բրոքականտիսդը պէտք է փնտռէ տեղ-  
ւոյն վրայ և շրջանին ձէջ, հարուստ հայ անուրիները  
կամ անգաւակ անոնները, ինչպէս առհասարակ ազգա-  
սէր հարուստ անձերը, և յարմարագոյն ձեւով ծը ա-  
նոնց թելադրէ որ, հետեւելով բարերարներու ազգասի-  
րական օրինակին, կտակ ծը ընեն յօգուտ Միութեան  
և կամ կեանքի ապահովագրութիւն ծը կնքեն: Առ այդ  
օգտակար է իրենց ուշադրութեան յանձնել անդրանիկ  
Կեդր. Վարչական Ժողովի ՌիթՏԱԿԻՐը, «ԿՏԱԿԻՐ և

ՇՈՒԻՐԱՏՈՒՌԻԹԻՆՔ», «ԱՆՁԵՌՆԻՄԵԼԻՌԻԹԻՆՆԵՐ  
ԵՒ ԹՐԸՄԹ» և այլ հրատարակութիւններ, որոնց ձէջ  
ամփոփուած են կտակի զանազան եղանակներ և նպա-  
տակներ, առաւելագոյն երաշխիքներով և թելադրական  
արդիւնքներով: Այդ կարգի անձերէ կրնայ խնդրուիլ  
նաեւ որ ծխանուազ նուիրատուութիւններ ընեն Միու-  
թեան ընդհանուր նպատակին կամ զանազան ձեռնար-  
կութեանց համար: Այս ուղղութեամբ կատարուած աշ-  
խատանքներուն ձէջ, բրոքականտիսդը պէտք է ջանա-  
հար ըլլայ ճանաւանդ Միութեան Բարերար և Պատուոյ  
անդամներ արձանագրել, համապատասխան մուտքի  
տուրքեր կամ նուիրատուութիւններ ձեռք բերելով, ու-  
րուն համար համոզիչ բացատրութիւններ կու տայ  
Միութեան վստահուած բազմաթիւ հիմնադրամներուն  
վիճակին և արդիւնքներուն նկատմամբ:

12. — Բրոքականտիսդը պէտք է ո և է ջանք  
չի խնայէ որ շրջակայ վայրերը եւս, ուր փոքրաթիւ  
Հայեր կը գտնուին, գտնէ Օժանդակ Մասնաժողովներ  
կազմուին, իսկ ամէն տեղ ճանաւոր հոգ տանելու է  
Կրտսերներու Լիկաներու և Տիկնանց Օժանդակ Մաս-  
նախումբներու օգտաշատ կազմութեան, որոնց գլխաւոր  
գործը պէտք է ըլլայ Միութեան ընդհանուր ճարտե-  
րուն սատարել ճանաւոր ճիշդցներով, ոչ ծխայն օժան-  
դակ անդամներու ճանակցութեամբ, այլ կազմակեր-  
պութեամբը հանդէսներու, ներկայացումներու, պաղար-  
ներու, բանախօսութեանց, եւն: Երիտասարդները և մա-  
նուանդ տիկիները իրենց փորձուած անձնուիրութեամբ



կարող են աւելի մեծ ծառայութիւններ մատուցանել  
Հ. Բ. Ը. Միութեան (\*):

13. — Բրոքականտիպը պէտք է նաճակներով  
և տեղեկագիրներով իր կատարած գործին օրը օրին  
կանոնաւորապէս հաղորդ պահէ Ընդհ. Տնօրէնութիւնը,  
Շրջ. Յանձնաժողովը կամ Տեղական Մասնաժողովը որ  
վստահած է իրեն այդ պաշտօնը, հաղորդելով նաեւ  
ամփոփ տեղեկութիւններ իր այցելած գաղութներուն  
վիճակին վրայօք եւ ներկայացնելով առաջարկներ  
Միութեան բարգաւաճման տեսակէտով:

— :: —

(\*) Կեդր. վարչ. ժողովը Պատուոյ կամ Բարե-  
բար Անդամի տիտղոսներէն մին կամ միւսը կու տայ  
այն անձերուն որ բացառիկ ծառայութիւններ կը մա-  
տուցանեն Միութեան:

## ՔԱՂՈՒԱԾԻ ՀԻՄՆ. ԿԱՆՈՆԱԳՐԷՆ

### Ն Պ Ա Տ Ա Կ Ը

Ա. — Օժանդակել հայ ժողովուրդին մտաւոր  
եւ բարոյական զարգացման:

Բ. — Օգնել անոր նիւթական ու տնտեսա-  
կան վիճակին բարելաման:

Գ. — Քաջալերել սոյն արդիւնքները յառաջ  
բերելու ծառայող ամէն ձեռնարկ ու հրատարա-  
կութիւն:

### Ա Ն Դ Ա Մ Ա Կ Ց Ո Ւ Թ Ի Ի Ն

Ընկերակցութեան անդամ ըլլալու համար  
պէտք է կեդր. վարչ. ժողովին կամ անոր ստորեւ  
նախատեսուած Տեղական Մասնաժողովներէն մէ-  
կուն խնդրանք ներկայացնել, եւ կամ երկու ան-  
դամի կողմէ ներկայացուիլ: Այդ ժողովը նիս-  
տին ներկայ գտնուող անդամներու մեծամաս-  
նութեամբ կը քուէարկէ ընդունելութիւնը, յե-  
տագայ 14րդ եւ 25րդ յօդուածներուն տրամա-  
դրութեանց համաձայն:

Կարող է անդամակցիլ, առանց սեռի եւ  
դաւանանքի խտրութեան, ամէն Հայ որ յանձն



կ'առնէ յարգել ներկայ կանոնագիրը եւ կանոնաւորապէս հատուցանել իր անդամաւճարը:

Միւլթեան ամէն անդամ իր ընդունելութեան ժամանակ պարտաւոր է վճարել մուտքի տուրք մը եւ ամսական անդամաւճար մը, որոնց քանակը ինքը ազատ է որոշելու: Սակայն ոչ մէկ ատեն մուտքի տուրքը զուիցերիական երկու ֆրանքէ եւ ամսական անդամաւճարը զուիցերիական մէկ ֆրանքէ պակաս չեն կրնար ըլլալ: Զանազան երկիրներ քնակող անդամներու համար տոյն գումարները պէտք է վերաճուին միեւնոյն արժէքը ներկայացնող տեղ դրամներու:

Անդամները ազատ են միանուագ վճարելու իրենց մէկ տարուան անդամաւճարները:

#### ԲԱՐԵՐԱՐ ԵՒ ՊԱՏՈՒՅՑ ԱՆԿԱՄՆԵՐ

Կեդր. վարչ. ժողովը կուտայ՝

Ա. — բարերար Անդամի տիտղոսը այն անձերուն որ մէկ անգամէն առնուազն 25000 զուիցերիական ֆրանքի համարժէք նուիրատուութիւն մը կ'ընեն Միւլթեան:

Բ. — Պատուոյ Անդամի տիտղոսը այն անձերուն որ մէկ անգամէն առնուազն 10000 զուիցերիական ֆրանքի համարժէք նուիրատուութիւն մը կ'ընեն:

## Հ. Բ. Բ. ՄԻՈՒԹԵԱՆ ՀԱՍՅԷՂԵՐԸ

ԿԵԿՐ. ՎԱՐՉ. ԺՈՂՈՎ. (ԲԱՐԵՐ)

**BUREAU DE DIRECTION**  
DU CONSEIL D'ADMINISTRATION CENTRAL  
de l'Union Générale Arménienne de Bienfaisance  
11, Square Alboni, PARIS (16<sup>e</sup>)

ԵՐՋ. ՅԱՆՋՆԱԺՈՂՈՎ. ԵԿԻՊՏՈՍԻ (ԳԱՀԻՐԷ)

**COMITÉ RÉGIONAL D'EGYPTE**  
de l'Union Générale Arménienne de Bienfaisance  
B. P. 1079, Le CAIRE (Egypte)

ԵՐՋ. ՅԱՆՋՆԱԺՈՂՈՎ. ԱՄԵՐԻԿԱՅԻ (ՆԻՒ ԵՕՐԲ)

**DISTRICT COMMITTEE OF AMERICA**  
Armenian General Benevolent Union  
351 Fourth Avenue, NEW YORK, N. Y. (U. S. A.)



ԻՆՉՈՒՆԻ ԿԸ ԳՆԱՀԱՏՆԵՆ...

« Համոզուած եմ սակայն, որ եթէ մեր Ազգին մէջ միակ ձեռնարկ մը կայ, որ խոհեմութեամբ մտածուած, իմաստութեամբ կազմակերպուած, եւ ուղղամտութեամբ գործադրուած ըլլայ, այն այ Հ. Բ. Ը. Միութիւնն է: »

ՄԱՆԱԲԻԱ ԱՐՔԵՊ. ՕՐՄԱՆԵԱՆ

« Աշակցելով Հ. Բ. Ը. Միութեան, ծառայում եմք Մայր-Հայրենիքին: »

ԳԵՈՐԳ ԱԲԳԱՐ

« Որբեր պահելու եւ պատսպարելու ձեր դաղափարը հիանալի է: Հայկական դատին ամբողջ ապագան այս որբերէն կախեալ է: »

ԳՆԳ. ՊՐԵՍՕՆ

Ընդհ. վարիչ Կիլիկոյ

« Անձնուէր ու համերաշխ գործակցութիւնն էր անշուշտ որ յաջողած էր այնքա՛ն տարուկ ու զուարթարար մթնոլորտ մը ստեղծել, ինչպէս «Վասպուրական» Որբանոցի, նոյնպէս եւ «Արարատեան» ի ծոցին մէջ, Բարեգործականի փրկարար հովանաւորութեան ներքեւ: »

ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊՍԿ. ԳՈՒՐԵԱՆ

Պատրիարք Երուսաղէմի

« 60 ական Թուականներէն ի վեր ազգին մէջ հետըհետէ երեւցած այլեւայլ կարգի կազմակերպութեանց մէջ, ես, իմ մասիս, այս նորակազմ ընկերութիւնը կը տեսնեմ ամէն յոյս եւ ապահովութիւն ներշնչող, Թէ՛ իրեն ծնունդ տուող անձանց անկախ դիրքին առաւելութեամբը, Թէ՛ նպատակին բարձրութեամբը եւ հանրայնութեամբը: ...Խորարմատ, բազմաստեղծ, կենսունակ ծառն է որ կը սաւառնի դէպի բարձունս, ե՛ւ կը վայելչանայ, ե՛ւ կը պողարբի, ե՛ւ կը հովանաւորէ: »

ՏՕԲԹ. Յ. ԹԻՐԵԱԲԵԱՆ

« Ազգային գրադարան »



NL0213767



Impr. MASSIS, 208, rue Lafayette



3. 170